№ 117 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12 **1895** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12 № 117

ՔԱՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հին և նոր կուսակցութիւններ. Հեռագիրներ. Հայոց հարցը և դիպլոմատիան. Լիբանան և Հայաստան.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կարսի երկաթուղու գծի տնտեսական նշանակութիւնը. Նամակ Վերին-Ագուլիսից. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.—Տրապիզօնի կոտորածը.

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Հայկական բէֆորմների ընդունելը այնքան չէ կատաղեցրել նոյն իսկ կառավարութեան ձեռքով գրգռված թիւրք ամբոխին, որքան հին կուսակցութիւնը թիւրքիայում:

Այդ կուսակցութիւնը, որի գլխաւոր պաժերը կազմում են թիւրք բարձր հոգևորականները և օսմանեան պետական պաշտօնեաները, ցանցի նման շրջապատել է պալատը և հէնց այս րոպէիս ահագին ինտրիգներ է լարում՝ նոյն իսկ սուլթանի դէմ, գրգռված այն բանից, որ Թիւրքիայում տեղի ունեցաւ մի բարեկարգութիւն, պետական կեանքի մի փոքրիկ վերանորոգութիւն:

Դա առաջին անգամը չէ: Հին, յետադէմ, ֆանատիկոս տարրից կազմված այդ կուսակցութիւնը միշտ այդպէս է եղել. նա միշտ դէմ է եղել որ և է վերանորոգութեան, փոփոխութեան Թիւրքիայում, և այդ պատճառով կատաղի թշնամի է մի ուրիշ, թէև դեռ ևս բաւական թոյլ, բայց համակրելի կուսակցութեան, որը յայտնի է Թիւրքիայում նոր կուսակցութիւն, կամ երիտասարդ Թիւրքիա անունով:

Հին կուսակցութիւնն է, որ միշտ գրգռում է ֆանատիկոս ամբոխը քրիստոնեաների դէմ, նա է, որ աշխատում է օսմանեան պետութիւնից կազմել մի կրօնական թագաւորութիւն, նա է, որ բաժանում է պետութեան բարձր պաշտօնները ահագին կաշառքներով, կլանում է պետական գանձի ահագին մասը, և շնորհիւ իր այդ անմիտ քաղաքականութեան՝ հասցրեց երբեմն լայնածաւալ օսմանեան պետութիւնը ներկայ թշուառ վիճակին:

Մինչդեռ նոր կուսակցութիւնը աշխատում է պահպանել թիւրքիայի գոյութիւնը մի շարք անհրաժեշտ վերանորոգութիւններով, առաջարկելով, օրինակ, հաւասար իրաւունքներ տալ պետութեան մէջ՝ բոլոր դաւանութիւններին պատկանող ազգաբնակութեան, վերանորոգել վարչական կազմակերպութիւնը, պարլամենտ հիմնել,—հին կուսակցութիւնը, ընդհակառակն, այդ բոլորը համարում է օսմանեան պետութեան կործանում և աշխատում է թոյլ չը տալ, որ մազի չափ անգամ փոխվի այժմեան քայքայված, փթած, մեռելութեան հատած վիճակը, որ սպառնում է վերջնական կործանում այդ պետութեանը:

Եւ ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ, երբ այդ հակակրելի հին կուսակցութիւնը տեսաւ, որ իր ծրագիրը չէ աջողվում, ինչպէս, օրինակ, հայկական բէֆորմների հարցում, անմիջապէս դիմեց իր սովորական միջոցին՝ պալատական ինտրիգներին, ձգտելով դահիճներ անել սուլթանին, որպէս զի դէթ այդ ճանապարհով հասնի իր նպատակներին:

Եւ հէնց այս րոպէիս, հայկական բէֆորմների պատճառով, հին կուսակցութիւնը կատաղի կերպով պատրաստում է պալատական ինտրիգներ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Սեփական)

Մեր թղթակիցը հեռագրում է մեզ Վիէննայից, հոկտեմբերի 10/22-ից.

„Խնայելով մահմէդական ժողովուրդը, սուլթանի իրապէս դեռ ևս չէ հրատարակած: Ընդունված գլխաւոր բէֆորմները հեռևեալներն են՝ ընդունել քրիստոնեաներին ժանդարմերիայի և ոստիկանութեան մէջ. բարեկարգել բանտերը. ժանդարմերիան և զօրքերը պէտք է ուղեկցեն քիւրդերին, երբ նրանք անցնում կը լինեն հայկական նահանգների միջով. ընտելացնել նրանց նստակեաց կեանքին. հրատարակել կանոններ համիդիէ հեծելազօրքի համար: Մանրամասնութիւններ չը կան: Ֆէտի-բէյ, Լիբանանի նահանգապետի եղբայրը, նշանակվում է Հայաստանի կոմիսար:“

(Ռուսաց գործակալութեան)

Կ. Պոլիս, 10 հոկտեմբերի: Թիւրքայ լրագիրներում տպված է պաշտօնական հաղորդագրութիւն, որ ասում է, թէ գոյութիւն ունեցող օրէնքների հիման վրա պետական պաշտօններ տրվում են բոլոր թիւրքահպատակներին, առանց խտրութեան ծագման: Ապա ասված է, որ Փոքր-Ասիայի մի քանի նահանգներում բէֆորմներ մտցնելու նպատակով, կառավարութիւնը մշակեց մի օրէնսդրութիւն, որ հաստատված է սուլթանից:

Այժմ օրէնքի այժ ստացած բէֆորմները վերաբերում են, ի միջի այլոց՝ հեռևեալ կէտերին:

1) Ընդարձակել տանուտէրների (ատարշինա) խորհրդի իրաւունքները:

2) Նշանակել դատաստանական տեսուչներ:

3) Հաստատել բանտերի վրա վերահսկողութիւն:

4) Ընդունել բոլոր թիւրքահպատակներին ժանդարմերիայի և ոստիկանութեան ծառայութեան մէջ՝ համապատասխան զանազան ազգութիւններին պատկանող բնակիչների թիւին վիլայէթներում:

5) Պատշաճաւոր թիւով դաշտային պահապաններ նշանակել:

6) Ժանդարմները պէտք է ուղեկցեն քիւրդ ցեղերին, երբ նրանք իրանց ամբոխներից անցնում են ձմեռվայ կայարանները, ընդհարումների առաջն առնելու համար:

7) Վերջնականապէս նստակեաց դարձնել թափառական քիւրդ ցեղերին:

8) Կանոնաւորութիւն հրատարակել „համիդիէ“ հեծելազօրքի համար, որի զինուորներին իրաւունք է տրվում համազգեստ և զէնք ունենալ միայն զօրագումարների ժամանակ:

9) Իւրաքանչիւր տարի տեսուչներ ուղարկել նահանգները՝ երկրագործութեան մէջ անկանոնութիւնները վերկայնելու համար:

10) Հարկերը առնել համայնքների տանուտէրերի կամ այն անձանց ձեռքով, որոնց ընտրում է տեղական ազգաբնակութիւնը և

11) Արգելել ծախել հող, երկրագործական գործիքներ, գրաստ և սերմեր պետական հարկի համար և մասնաւոր անձանց:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԴԻՊԼՕՄԱՏԻԱ

—

I Անգլիական քաղաքականութիւնը

Լոնդոնից «Нов. Время» լրագրի սեփական թղթակիցը հեռագրում է հետևեալը հոկտեմբերի 4-ից.

«Մարկիզ Սալսբիւրիի կիսապաշտօնական օրգանը յայտարարում է, հասարակութեանը հանգստացնելու նպատակով, որ անգլիական նաւատորմը սրանից յետոյ ևս կը մնայ Դարդանելի մօտակայ շրջականերում, Ռուսաստանի և Ֆրանսիայի համաձայնութեամբ և հաւանութեամբ: Կիսապաշտօնական օրգանի այդ յայտարարութիւնը մեծ տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա. Լոնդոնի ֆոնդային բորսան սկսեց բարձրանալ, Ռուսաստանի և Ֆրանսիայի համաձայնութեամբ և հաւանութեամբ: Կիսապաշտօնական օրգանի այդ յայտարարութիւնը մեծ տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա. Լոնդոնի ֆոնդային բորսան սկսեց բարձրանալ, Ռուսաստանի և Ֆրանսիայի համաձայնութեամբ և հաւանութեամբ: Կիսապաշտօնական օրգանի այդ յայտարարութիւնը մեծ տպաւորութիւն գործեց հասարակու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Տրապիզօն, հոկտեմբերի 7-ին

—

ՏՐԱՊԻԶՕՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Վերջին նամակս, որ կը կրէր սեպտեմբեր 23 ամսաթիւը, գրելէս ի վեր առաջին անգամն է, որ միջոց կունենամ գրիչ առնելու ձեռքս: Աղէտալին յանկարծականութեանը տակ չուարած չմնրած, ես ալ ուրիշ շատերու պէս հազիւ թէ յաջողեցայ խուսափել մահերու ամենէն սարսափելի տեսակէն, որուն զոհ գնաց սեպտեմբերի 26-ի երեքշաբթի օրը Տրապիզօնի հայ ժողովրդէն ոտտար մաս մը:

Վերջին նամակովս ըսած էի, թէ առաջնորդարանին ժողովականները կուսակալին մօտ կանչուած են. կուսակալը ցաւ յայտնելով ուրբաթ գիշերուան տեղի ունեցած դէպքերուն համար, ըսեր է թէ չի կրնար զսպել թիւրք խուժանին մոլեգնութիւնը, բայց պիտի աշխատի կարելի եղածին չափ պահել հանրային անդորրութիւնը. աւելի լաւ կըլլայ, եթէ հայերը յանձնեն Պահրի փաշային անաբեկիչները, ասով ամեն բան կը հանդարտի, անտեղութիւններու առաջքը կառնուի:

Հայերը կը պատասխանեն, թէ իրենք ալ կը փափաքին ոճրագործներուն ձերբակալումին, սակայն ինչպէս կրնան կատարել պաշտօն մը, որ կառավարութեան կը պատկանի. կը յարգեն կառավարութեան բոլոր օրէնքները ու եթէ գիտնան ոճրագործներուն տեղը, անտարակոյս կը յայտնեն. իրենց դռները երբ փակած են օրինական խուզարկութիւններուն դէմ: Ժողովականները յետոյ կուսակալին ուշադրութեանը կը յանձնեն այն իրողութիւնը, թէ թիւրք խուժանը պատրաստութիւն կը տեսնէ հայերը ջարդելու, անագին քանակութեամբ զէնք կը գնէ, փամփուշտ կը ճարէ և դաշոյններ կը սրէ: Կուսակալը առանց կարեւորութիւն տալու հայերուն դիտողութեանց՝ կը ճամբէ զանոնք:

Սեպտեմբերի 23-ի շաբաթ, 24-ի կիրակի և 25 երկուշաբթի օրերը թիւրք խուժանը կը շարունակէ իր պատրաստութիւնները: Կառավարութիւնը կարծես չէր տեսներ եղածները, նոյն իսկ կը քաջալերէր. ստուգուած է, որ պահականոցներէն հրացան և փամփուշտ արուեցաւ պաշի-պողոքներուն: Այս դրութիւնը չէր կրնար անտարբեր թողուլ հայերը. յուսահատական վիճակը տեղեկագրուեցաւ հիւպատոսներուն, որոնք սակայն քաջութիւն չունեցան կատարելու իրենց պարտականութիւնները և անտարակոյս պատասխանատուութեան մէկ մասն ալ կը ծանրանայ անոնց վրա:

Հայերուն վիճակը երթալով յուսահատական կը դառնար: Սեպտեմբերի 22-էն ի վեր բոլոր հայերը,—բացի քանի մը հայ-կաթոլիկներէն,—ամենքն ալ փակած էին խանութները. փակուած էին նաև եկեղեցին ու վարժարանը: Գիշերները ահի և սարսափի մէջ կանցընէին բոլոր հայերը: Ընտանիքներ սկսած էին արդէն աւելի ապահով տեղեր փոխադրուիլ: Մինչև երկուշաբթի, սեպտ. 25 կը շարունակէր այս վիճակը, մահուան դողը կարծես տարածուած էր քաղաքին վրա: Շատեր մինչև վերջին չունչերնին մաքառելու կը պատրաստուէին, ուրիշներ ալ զլուխնին կը թաթվէին ու միշտ կը կրկնէին. «Տրապիզօնի մէջ այդպէս բան կարելի չէ, որ պատահի:»

Թիւրք խուժանը սակայն հայերը ջարդելու ծրագրին և պատրաստութեան մէջ վայրկեան մը անգամ պարապը չէր անցըներ: Ուրբաթ գիշերուան յարձակումը պատրուակ ընելով, կառավարութիւնը նոր զօրքեր բերել տուած էր շրջակայ տեղերէն, որպէս թէ «հանրային անդորրութիւնը» ապահովելու համար: Այլանդակ տարազով և հրէշային կերպարանքով պաշը-պողոքներ լեցուած էին քաղաքը, ամենքն ալ զինուած:

Երկուշաբթի, սեպտ. 25, կուսակալը նորէն հրաւիրելով մեր առաջնորդարանին ժողովականները, բացէ ի բաց կը յայտարարէ անոնց, թէ պէտք է յանձնէք Պահրիին անաբեկիչները. հակառակ պարագային չեմ կրնար երաշխաւորել ձեր կեանքներուն ապահովութիւնը թիւրք խուժանին կատաղութեան դէմ: Այս պարզ խոստովանութեան վրա հայերը կահաբեկին ու առաջնորդարան երթալով կուսակալին տրուելու համար կը պատրաստեն թագրիր մը, որուն եթէ ոչ իսկական օրինակը, գոնէ իմաստը կը համառօտեմ.

«Կը ցաւինք, կըսեն հայերը, Պահրի փաշայի անձին դէմ գործուած սպանութեան փորձին համար և կը փափաքինք, որ սպանիչները իրենց արժանի պատիժը գտնեն. չենք կրնար սակայն ընդունել այն մտածութիւնը, զոր ունի կառավարութիւնը Տրապիզօնի հայերուն մասին, սպանութեան գործակից նկատելով զանոնք. կառավարական բոլոր մնօրինութիւններուն դէմ ըսելիք չունինք. մեր տունները բաց են օրէնքին առջև և մենք սիրայօժար կը գործակցինք, որ յանցաւորները անպատիժ չի մնան, երևան ելլեն: Հակառակ մեր այս անկեղծ յայտարարութեան, եթէ կառավարութիւնը կը խոստովանի, թէ չի կրնար պաշտպանել մեզ, ինչ կրնանք ընել. չէինք կրնար երևակայական յանցաւորներ ստեղծել, քանի որ չենք գիտեր թէ ովքեր են բուն սոքագործները: Մեր ընտանիքներովը, զաւակներով, օրօրոցի մանուկներովը Նախախնամութեան յանձնուած, կը մնայ մեզ սիրով համակերպիլ օսմանեան կառավարութեան ամէն մնօրինութիւններուն:»

Այս թագրիրին վրա առերևոյթ հանդարտութիւն մը տիրեց: Սեպտ. 26 երեքշաբթի առաւու շատեր յիմարաբար խանութ բացած էին, թղթատարի և առուտուրի օր էր: Թիւրքերը կարծես ետ կեցած էին իրենց մտադրութենէն. մինչև իսկ կը հրաւիրէին խանութ չի բացող հայերը, որ խանութնին բանան, «բան չի կայ» ըսելով: Ուրբաթ գիշերուան յարձակումը անյաջող եղք ունեցած էր: Այն գիշերը լաւ պաշտպանած էին հայերը իրենց տունները: Թիւրքերուն ուազմագիտական (ստրատէգիական) պլանը յաջող չէր, պէտք էր փոխել. հայերը դուրս հանել իրենց ամրոցներէն և ցերեկ օրով դուռը շուներու պէս սատկեցնել. ու այսպէս ալ ըրին:

Երեքշաբթի ժամը $4^1/_2$-ին փողը նշան տուաւ յարձակումը սկսելու. ջարդը սկսաւ Մէյտանի հրապարակէն. շուկան գտնուած բոլոր հայերը անխնայ սպաննուեցան. ջարդը տարածուեցաւ այնուհետև հայոց թաղերը, տունները: Մորթիչներու կառուցած խմբերը, կանոնաւոր զօրքէ և պաշը-պողոքներէ բաղկացած, անխնայ կը սպաննէր, կը ջարդէր, կը քանդէր բոլոր հայերը, հայոց տունները. կարելի չէ բոլոր մանրամասնութիւնները գրել, ամէն օր ունի իր նորադոյն և սրտաճմլիկ յայտնութիւնը: Կոտորածը տեւեց մինչև ժամը $10^1/_2$ (ըստ թրքաց). վերիվերոյ հաշով մինչև 10,000 հրացանի հարուած պարպուեցաւ,

թեան վրա, բայց չատերը դրան կասկածով վերաբերվեցին։

«Այստեղ համոզված են, որ սուլթանը չուտով կը հաստատի Հայաստանի բէֆօրմները։ Այստեղ արդէն պատրաստութիւններ տեսան փառաւոր կերպով ոտնձգելու անգլիական քաղաքականութեան փառաւոր յաղթութիւնը եւրոպական Արեւելքում։»

II Երկու յօդուած

Լօնդօնից հեռագրում են. «Քաղաքական շրջանակներում ընդհանուր խօսակցութեան նիւթը տիկին Օ. Նօվիկօվայի երկու յօդուածներն են, որոնք տպվեցին «Daily Chronicle» լրագրում։ Ամբողջ անգլիական մամուլը մեծ հետաքրքրութեամբ վերաբերվեց այդ յօդուածներին։ Մանաւանդ ուշադրութիւն դարձվեց այն փաստական ապացոյցների վրա, որ բերում է տիկին Նօվիկօվան այն բանի մասին, թէ ռուսաց լիազօրները Բերլինի կոնգրէսում առաջարկեցին կոնգրէսին մի շարք միջոցներ, որոնք երաշխաւորում էին Թիւրքաց հայերին իրական պաշտպանութիւն Թիւրքաց իշխանութիւնների կամայականութեան դէմ, բայց կոնգրէսը մերժեց Ռուսաստանի առաջարկութիւնները անգլիական լիազօրի՝ հէնց նոյն մարկիզ Սալսբիւրիի դրդմամբ։ Այն ինչ այժմ անգլիական մամուլը, նոյն մարկիզ Սալսբիւրիի ներշնչմամբ, պահանջում է այն բէֆօրմները մտցնել Հայաստանում, որոնք համարեա թէ 20 տարի առաջ նախագծված էին ռուս պետական մարդկանց ձեռքով և մերժված այն ժամանակ անգլիական այժմեան առաջին մինիստրի կողմից։ Տիկին Նօվիկօվայի մերկացումները չատ չը դուր եկան անգլիական մի քանի քաղաքագէտներին, բայց հեղինակի բերած կտորները զիպլօմատիական գօկումէնտներից՝ կասկածից դուրս են։»

III Փախստականներ

Կ. Պոլսից հեռագրում են հոկտեմբերի 3-ից, երեկոյեան, հետեւեալը. «Այստեղ հասած նաւի կապիտանի խօսքերով, Տրապիզօնում, ռուսաց նաւի վրա գտնվում են 2000 փախստականներ, որոնք պահանջում են Բաթում տանել իրանց։ Նոյն բանն են պահանջում դեռ ևս քաղաքում գտնված չատ բնակիչներ»։

IV Մի թէ ճիշդ է

Լօնդօնից «Новое Время» լրագրի յատուկ թղթակիցը հոկտեմբերի 5-ից հեռագրում է հետեւեալը. «Կ. Պոլսից ստացված հեռագիրները հաղորդում են, որ մեծ պետութիւնների դեսպանների և Բ. Դրան մէջ համաձայնութիւն կայացաւ Հայաստանի վարչական բէֆօրմների վերաբերմամբ և որ սուլթանի վաւերացումը սպասվում է օրից օր, ժամ առ ժամ։ Համաձայնութիւնը կայացաւ չնորհիւ այն բանի, որ մարկիզ Սալսբիւրի հրաժարվեց եւրոպական հիւպատոսների կօնտրոլից (!!!) նոյնպէս և մի քանի՝ յատուկ անգլիական պահանջներից։»

V Մերժումն

Լօնդօնից, «Новости» լրագրի յատուկ թղթակիցը հեռագրում է հոկտեմբերի 5-ից. «Standard» լրագիրը հաղորդում է, որ Սաիդ-փաշան այցելեց անգլիական դեսպանին՝ նրանից համաձայնութիւն առնելու, որպէս զի մի քանի փոփոխութիւններ մտցնվեն բէֆօրմների ծրագրի մէջ, բայց կտրական մերժումն ստացաւ»։

VI Ցեղափոխական թիւրքեր

Կ. Պոլսում կալանաւորված են մի քանի մահմեդականներ, որոնք յեղափոխական ճառեր էին արտասանում։

VII Ճիշդ է

Բէյրութի գործակալութիւնը հեռագրում է Տրապիզօնից, հոկտեմբերի 9-ից, որ միանգամայն հաստատված է այն իրողութիւնը, թէ կոտորածին և աւարառութեանը մասնակցել է Թիւրք զօրքը։

ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Սըր Չարլզ Դիլկ, որը Գլադստօնի կաբինէտի մէջ արտաքին գործերի մինիստրութեան ստատսեկրետար էր, յայտնեց «Times» լրագրի թղթակցին իր կարծիքը հայոց հարցի մասին։

Նա համոզված է, որ Բ. Դուռը կընդունի երեք պետութիւնների առաջադրած յայտագրի բոլոր կէտերը, որոնց հետ, բարոյապէս կամ իրաւէս, միացան Իտալիան, Աւստրիան և Գերմանիան։ Ապա Չարլզ Դիլկ հետեւեալ անալոգիան բերեց վերջին անցքերի և նրանց մէջ, որոնք տեղի ունեցան զրուզների և մարոնիտների ընդհարման պատճառով 1860 թվին։

«Լիբանանում այն ժամանակ կատարելապէս նոյնպիսի յուզմունքներ կային, ինչ որ այժմ տեղի ունեն Հայաստանում։ Շատ քրիստոնեաներ կոտորվեցին և եւրոպական պետութիւնները իրանց մէջ համաձայնութիւն կայացրին միջամտութեան և Բ. Դրան վրա ճնշում գործ դնելու վերաբերմամբ։ Պետութիւնները միաբանութեամբ ընտրեցին մի կօմիսար, որը պէտք է բանակցութիւններ սկսէր Բ. Դրան հետ և աշխատէր բարեփոխումներ մտցնել տալ վարչութեան մէջ, որոնցով կարելի լինէր տեղի ունեցող անկարգութիւնների առաջն առնել։ Ընտրութիւնն ընկաւ լորդ Դիւֆէրինի, Պարիզի անգլիական այժմեան դեսպանի վրա, որը սկսեց բանակցութիւններ Բ. Դրան հետ, պաշտպան ունենալով ֆրանսիական զօրքերը։

«Թիւրքիան զիջեց և բոլոր կէտերն ընդունեց. ապագան ցոյց տուեց, որ նա չատ լաւ արաւ, որովհետև այժմ Լիբանանը կարելի է Թիւրքաց օրինակելի նահանգը համարել, ուր ոչ մի ագիտացիա չը կայ և հարկերը վճարվում են կանոնաւոր կերպով և առանց ստիպմանքի։ Շատ հաւանական է, որ հայոց հարցումն ևս Թիւրքիան, չը նայելով վերջին օրերի բոլոր դժուարութիւններին և յուզմունքներին, այնու ամենայնիւ նոյն կերպ կը վարվի և բարեյաջող լուծում կը տայ նրան, չը նայելով մի քանի լրագիրների նախագուշակութիւններին»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐՍԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՑԻՆ ԳԾԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Անցեալ տարի, երբ դէպի Կարս և Երևան տանող երկաթուղի չինելու հարցը բոլորովին հաստատուեաւ, մինիստրութիւնը ձեռնարկեց մի շարք հետազօտութիւնների՝ զանազան տեսակէտներից։

Այդ հետազօտութիւնների մէջ չատ պատկառելի և նշանաւոր տեղ են բռնում այն ուսումնասիրութիւնները, որ կատարվեցին ապագայ երկաթուղու գծի տնտեսական նշանակութիւնը պարզելու նպատակով։ Բաւական չէ, որ երկաթուղին ծառայէ զինուորական և ընդհանուր վարչական նպատակներին, այլ նա պէտք է նաև տնտեսական նշանակութիւն ունենայ, կարողանայ բաւականաչափ ապրանք տեղափոխել և զգալի դարկ տալ երկրի տնտեսական զարգացման։

Վերջին տեսակի հետազօտութիւնները այժմ արդէն կատարված են մանրամասնօրէն և մշակված՝ հրատարակութեան համար, բայց երկաթուղային վարչութիւնը չէ չտապում դրանց լոյս ընծայելու և ծանօթացնելու հասարակութիւնը այդ հետաքրքիր գործի հետ։

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը աչքի առաջ ունենալով, որ այդ տեսակ հետազօտութիւնները չատ ուսանելի են և կարող են զանազան ձեռնարկութիւնների հիմք ծառայել, առաջարկել է իր դահլիճը մանագէտ հետազօտողներին՝ կարդալու իրանց աշխատութիւնները հասարակութեան համար։

Առաջին ընթերցումը տեղի կունենայ վաղը, ուրբաթ, ամսիս 13-ին։ Կը կարդայ Ա. Արզուբիանցկին՝ Բօրչալուի գաւառի մասին։

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Սեպտեմբերի 26-ին

Վերջապէս աւաղակապետ Նաբին մի հարուած ստացաւ։ Ամսիս 14-ին Զանգեզուրից երկու մարվանցի լուր են բերում Ցղնու տանուտէր Տէր-Սարգսեանցին, թէ Նաբին, կողոպտելով երկու գիւղ, գալիս է մեր կողմերը, մտադիր լինելով յարձակվել Մարուանիսի վրա։ Այդ լուրը յայտնում են և պրիստավի օգնական Միրզա-Մէհտի Հաջիէվին։ Տանուտէրը ձիաւորներով, իսկ պրիստավի օգնականը կօզակներով դիմում են դէպի Մարուանիս և այնտեղ չը գտնելով աւաղակներին, ընկնում են նրանց ետեւից։

Հետեղների մի մասը հասնում է Զառաջիւր ամայի տեղը և բարձրանալով մօտիկ գտնված սարը, նկատում են 10 ձիաւոր. հեռադիտակով նայելով համոզվում են, որ դրանք թուրք ուխտաւորներ են։ Աւաղակները ձորակում իջեցած են լինում, միանգամայն անկասելի լինելով մերոնց համար։ Թուրք ուխտաւորներին աւաղակները ընդունում են ոստիկանների տեղ և կարծելով, որ նրանք բոլորովին հեռացել են, իսկոյն բարձում են ձիերը և ճանապարհվում։ Տանուտէրը նկատելով նրանց, իսկոյն իր մարդկանցով չտապում է բռնել Գոնդզ-Ղըռան կոչված քարափը, որը անառիկ դիրք ունի և որի մօտով պիտի անցնէին աւաղակները։ Աւաղակները լինում են մօտ 28 հոգի, իսկ տանուտէրը լինում է չորս հոգով, որոնց հետ չուտով գալիս միանում է և պրիստավի օգնականը իր մի ձիաւորով։ Երբ ձիաւորները բաւականաչափ մօտենում են, սկսվում է հրացանաձգութիւն։ Առաջին հարուածից երկու ձի գլորվում են. միւսները նկատելով այդ, իսկոյն իջնում են ձիերից և սկսում են պաշտպանվել, բայց կարկտի պէս թափվող գնդակները չուտով ստիպում են նրանց փախչել։ Վրա է հասնում մութը, և աւաղակները վերցնելով իրանց վիրաւորված ընկերոջ և թողնելով 7 ձի և մէկ ջորի, բեռնված զանազան տեսակ ապրանքով, թողնում հեռանում են։ Ենթադրում են, որ աւաղակներից չատերը պէտք է վիրաւորված լինեն, որովհետև կուի տեղը արիւնով է ներկված։ Լաւ կայ, որ վիրաւորված աւաղակներից երկուսն էլ մեռել են Արաքսի ափին, բայց անց են կացրել միւս ափը և հողին յանձնել։

Եղելութեան մասին նոյն բօպէին յայտնում են հեռագրով Ջուլֆայից՝ Նախիջևանի գաւառանց հաշուելու դաշտերուն և թուրերուն անհամար հարուածները։ Հիւպատոսները բաւականացան իրենց դրօշակները պարզելով հանդիսատես ըլլալ անհոգ քարասրտութեամբ։

Քանդում, տնանկացում, ջարդ, ահա իսլամականութեան նշանաբանը և սեպտեմբեր 26-ի երեքշաբթի օրը, ժամը $4^1/_2$-էն մինչև $10^1/_2$, Տրապիզօնի մէջ մարթիներու կատաղի թափօրը կրցածը ըրաւ վերջին ծայր ճշդութեամբ հաւատարիմ մնալու իսլամութեան նշանաբանին։ Վայրագութեան օրինակներ կուզէք, խիստ չատ են. սակայն կարելի է ամենքն ալ յիշել ու գրել։ Սրճարաններու մէջ հայ ծերունիներ ջարդուեցան. Թիւրք սրճակերը չէր ուզած թերանալ իր սրբազան պարտականութեան մէջ։

Խանութպան մը գնդակով դեռին փռուեցաւ. Թիւրքերը խեղճին դիակին վրա գնդակի կարկուտ կը տեղացնէին. դէվրիշ մը վրա հասաւ և «կեավուրը այսպէս կը մանրեն» ըսելով ձեռքի սաթերով սկսաւ կտոր-կտոր ընել մեռած հայուն դիակը։—Զինուոր մը հայու մը կեանքը փրկելու համար 50 ոսկի ստանալէն ետքը՝ ետեւէն գնդակով կը սպաննէ։—Հայ երիտասարդ մը շուարած պահականոց կը մտնէ, Թիւրքերը կը հարցնեն թէ ինչ ազգէ ես. «յոյն եմ» կըսէ ու կը սկսի յունարէն խօսել. կազատի. եթէ յունարէն չը գիտնար։

Հարիւրապետ մը կը պառկեցնէ հայ մը և ոչխարի պէս կը մորթէ։ Շատեր վերջին պահուն իսլամականութիւն կընդունեն և կազատին։ Սպաննուած հայերուն դիակները ոտքէն չուան ձգած քաշելով կը տանէին կամ գերեզմանատուն կամ ծովը։ Հայ քահանան թաղած է 214 դիակ, մնացածին մէկ մասը ծովը թափած են, մէկ մասն ալ տաճկաց գերեզմանատունը փոսի մը մէջ լեցնելով ծածկած են, Սասունի կոտորածին բոլոր մանրամասնութիւնները խղճմտութեամբ ներկայացնելով։

Ըսի թէ հայերուն բոլոր ունեցածները, դրամ, կահկարասիք, զգեստեղէն և ուրիշ զարդեղէններ ամբողջովին կողոպտուած են։ Կոտորածին ատեն օրինակելի մարդասիրութիւն ցոյց տուին ֆրանսացի ֆոէէռները, մանաւանդ ֆոէր Ժոզէֆ, որ արաբացի հայ մըն է։ Հարիւրաւոր ընտանիքներ հիւրընկալեցին սիրայօժար իրենց ընդարձակ չէնքին մէջ, երբ սարսափահար պատէ պատ ցատկելով հոն կը վազէին։ Մինչև չաբաթ մը հոգացին ամեն բանէ զրկուած թշուառներուն օրական պէտքերը, կերակուր, հաց և անկողին բաշխելով։ Սրտաճմլիկ էր հոն խնուած հայ ընտանիքներու լացին ու կոծին տեսարանը. ամենքն ալ սիրելիներ ունէին սպաննուած. ներս մտնողը կը տեսնէր բոլորակներ կազմած արցունքոտ աչքով կիներ ու տղաքներ, որոնք անողոք մահէն փախած էին, անոր մանդաղին առջև թողելով իրենց սիրելիները։ Բազմաթիւ վիրաւորեալներ կային, որոնք կը դարմանուէին ֆոէռ Ժոզէֆին հոգածութեամբը. մանաւոր բժիշկ և վիրաբոյժ բերել կուտային, որոնք առհասարակ կը դարմանէին բոլոր հիւանդները։

Զարդը ու թալանը հաւասարապէս տարածուեցաւ շրջակայ գիւղերուն վրա. Մալա, Սէֆանոս, Պայրամ, Առղալիա, Տիվրանոս, Զիղաքսա և բոլոր հայաբնակ գիւղերը։ Թիւրքերը այրեցին չատ մը տուներ և հայերուն ձեռքերը կապելով սպաննեցին, ստիպելով հայ կիները, որ իսլամութիւնը ընդունեն, որովհետև քաղաքին մէջ ալ հայ մնացած չէ։ Հիմակ հայ կիները ստիպուած են Թիւրքի անուն կրելու և Թիւրքերէն խօսելու. չատեր քաղաք կուգան հարցնել թէ իրօք հայ մնացած չէ ու իրենք պէտք է, որ իսլամանան։ Ինչպէս ըսի, կեանքի կորուստը կարելի չէ հաշուել ճշդութեամբ, գիւղերը հարիւրաւորներով սպաննուած են, իսկ բոլոր ունեցածնին կողոպտուած է։

Հետեւեալ օրը, չորեքշաբթի, սեպտեմբեր 27 քաղաքը բռնական և զինուորական պաշարման (իտարէի էօրֆիէ) ներքև առնուած է վեհ. Սուլթանին հրամանով, ինչպէս ծանուցին Թիւրքերը տպուած աղդերով։ Հայերէն ողջ մնացողները սարսափահար կծկուած էին իրենց ապաստանած տեղերը և ահա Թիւրք զինուորական սպաներ ներկայանալով կը հրամայեն անձնատուր ըլլալ, որպէս թէ հայերը ապստամբած ու դիմադրութիւն փորձած էին։ Բոլոր հայերը ձերբակալելով բանտարկեցին Սարայը, Կիւղէլ-հիսարի զօրանոցը և ուրիշ տեղեր։ Զինուորական ատեան կազմուելով սկսան հարցաքննել կալանաւորները. չատերուն շղթայ զարկած են և նեղութիւններ կուտան, որպէս զի խոստովանին թէ իրենք ապստամբած են կայսերական կառավարութեան դէմ!!! Կը տեսնէք թէ Թիւրքերը ուր կը հասցընեն խեղկատակութիւնը. անդէն ժողովուրդ մը ջարդել տալ կանոնաւոր զօրքերուն և զինուած պաշը-պօղուքներուն, հիմակ ալ զինուորական ատեան դումարել պատժելու համար իբր ապստամբ զանոնք, որ կոտորածէն փախչելու յանցանքը գործած էին։

Խաղաղութիւնը դեռ տիրած չէ. հայ ժողովրդին թշուառութիւնը սարսափելի է. իր բոլոր ունեցածէն զրկուած, մերկութեան և անօթութեան մէջ կը տառապի։ Կուսակալը յայտարարած է անխնայ ջարդել մնացածներն ալ, եթէ փոքր շարժում մը հանեն. վստահութիւն չի կայ. չատեր հիւանդացած են, չատեր ալ խենթեցած։

Մինչև այս բօպէիս հայերու թշուառութիւնը մեղմացնելու և վախերը հանդարտեցնելու համար ոչ մի օգնութիւն չէ եղած։ Թիւրք խուժանը զրգռուած դրութեան մէջ է. հիմակ ալ կամբաստանէ հայերը թէ ջուրերուն և հացին մէջ թոյն խառնած են. չատ Թիւրքեր զգուշութեան համար ջուր չեն խմեր ու ակռայ կը կրճատեն հայերուն դէմ։

Իսկ գաղան Պահրին գոհ սրտով մեկնեցաւ Պոլիս սեպտեմբեր 30-ի չաբաթ օրը։ Նորանոր սպանութիւններով, ջարդերով, իսլամացումներով նուիրագործուած և փառաւորուած տեսաւ այն գազանութիւնները և վայրագութիւնները, որով այդ համիտականը ողողած էր իր անցքը Հայաստանի մէջ։

Նոյն օրը ռուսական յածաւորակ մը (croiseur) եկաւ Տրապիզօնի առջև. պոլկօվնիկ մը պաշտօնական այցելութիւն տուաւ ռուսական հիւպատոսարանը և կուսակալին։ Նաւը մինչև այսօր խարսխած է Տրապիզօնի առջև։

Կառավարութիւնը հիմակ կաշխատի յանցանքը հայերու վրա ձգել. խօսք կը պտտի թէ զինուորական ատեանը հրացանի պիտի դատապարտէ 10 հայ, որոնց մէջ են Շահրիկեան Յարութիւն, Տոքթ. Էնչէրեան, Արապեան, Խաչեան և այլն։ Քանի որ իրենց գործած խժդժութիւնները մինչև հիմակ ո և է արդիւնք չը հանդիպեցան, կրնան իրենց մոլեգնութիւնը հասցնել մինչև այդ պատուական մարդիկը հրացանի բռնելու։ Համոզված են թէ այդ հայերը յանցաւոր են, այսչափ. ոչ մէկ ապացոյց չը կայ իրենց ձեռքը, մանաւանդ իրենք լաւ գիտեն թէ ով է յանցաւորը։—Եթէ արտաքին զօրաւոր միջամտութիւն չըլլայ, Տրապիզօնի հայ ժողովուրդը արդէն փճացած է։

Վահէ

ԴԱՎԱՌԱՅՏ ԴԱՎԱՆՈՒՄՈՒ

Ամերիկոյեան տարեգրութիւն

Ի Ս Ա Ա Ք Ի Ն Ի Ն Ա Ն Ա Ն Ի Ն Ի Ն Ա Ն Ա Ն Ի Ն Ի Ն Ա Ն Ա Ն

Նորերս մի գիշեր շատ մութ է լինում և ի հարկէ ամեն մարդ արտաքոյ կարգի ուշադրութեամբ պահպանում էր իր այգին։ Բաւական չափ հրացանաձգութիւն էլ տեղի կունենայ այս առթիւ։ իսկ բոլոր Նուրին կարծելով, թէ մի անասնոյ բան է պատահել, չուտ մը խումբ մը ոստիկանաց հետ դէպի բաղերը կը վազէ. բայց ոչ ոք չի փախչեր, էլ նրանից վախցող չը կայ վանում։

—Ի՞նչ էք անում այստեղ, հարցնում է Նուրի էֆէնդին յուզուած և վրդովուած։

—Ոչինչ, էֆէնդի, բաղերիս աչքում ենք, կը պատասխանեն քանի մը կարիճներ հրացանները գիշերապահ զինուորների նման ուսերնուն վրա դրած և անվեհեր, խրոխտ կերպարանքով։

—Շատ լաւ, բայց ձեզ ո՞վ իրաւունք տուեց հրացան ունենալ և գործածել իսկ։

—Բոլոր էֆէնդի, զուր տեղը տակն ու վրա մի լինիք, ասում է մի դեռահաս պատանի, մենք տէրութեան օրէնքը ձեզանից չատ լաւ գիտենք և կը հպատակինք նրան. մեր այգիները պահպանելու համար հրազէնք գործածել բնաւ արգելված չէ։

—Շատ էք խօսում, ասում է Նուրին բարկացած և հրամայում է ոստիկաններին ամենքին էլ իսկոյն ձերբակալել և բանտ տանել։

Ոչ ոք դիմադրութիւն չէ անում և հինգ վեց երիտասարդներ լուռ մունջ հետևում են ոստիկաններին, հրացաններին էլ հետերնին։ Միւս առաւօտ բոլոր Նուրին գիշերվայ տեղեկագիրն կը մատուցանէ նորեկ Նաղիմ փաշային, մանաւորապէս ուշադրութիւն հրաւիրելով հայոց հրացանաձգութիւններին և ձերբակալեալներին վրա։ Փաշան կը հրամայէ, որ իսկոյն իր առաջ բերուին բանտարկեալք, յետոյ Նուրի էֆէնդին ուղղելով խօսքը կը հարցնէ.

—Այս մարդիկը ինչու բռնեցիք։

—Էֆէնդըմ, հրացան էին ձգում։

—Ո՞րտեղ։

—Իրենց բաղերումը։

—Ոչ ոք սպանուած է արդեօք։

—Ոչ ոք սպանուած չէ, բաչա էֆէնդի։

—Ուրեմն ինչ էք ուզում այդ մարդերից։

—Էֆէնդըմ, չօգ եդեպսը դիրլէր... (չատ անամօթներ են դրանք)։

—Ես այդ չը գիտեմ, ասում է բաշան բարկացած. քանի որ մէջտեղը մեռնող, ապրող չը կայ, ձեր այդ մարդիկը բռնելը բոլորովին ապօրէն է և հակառակ օրէնքաց։ Ես հրամայում է բոլորին արձակել։

Արգաս

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 հոկտեմբերի։ Ընդհանուր կրթութիւն տարածելու նպատակով, գաւառական դէմստվոյի ժողովները վճռեցին՝ դանձարանի հետ ծախսը կիսելով, էլի 48 դպրոցներ բանալ։ Բացի դրանից Պովէնեցկի գաւառում մտադրութիւն կայ բանալ 10 և Վիտեգորսկի՝ 8 դպրոցներ։

ՊԱՐԻԶ, 9 հոկտեմբերի։ Հանրապետութեան նախագահը հոկտեմբերի 8-ին ընդունեց գեներալ Դրագոմիրովին։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 9 հոկտեմբերի։ Տօկիոյից հաղորդում են, որ եապօնական կառավարութիւնը եապօնացիներին մեղաւոր ճանաչեց Կորէում տեղի ունեցած անկարգութիւնների համար։ Այսուհիսկ յետ կանչված եապօնական դեսպանը մեղադրվում է լուրջ զանցառութիւնների մէջ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 10-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	92	ր.	60 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»	17½ »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36	»	60 »
Ոսկի — — արժէ . .	7	»	40
Մաքսային կուպոններ — .	148	»	— »
Արծաթ — — — . .	—	»	— »
Բօրսային դիսկոնտ — .	6½		7½%
4% պետական բէնտա	98⅛	»	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ . . .	160	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	268	»	75
— — երկրորդ —	231	»	50 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	211	»	— »
5% պետական երկաթուղ. բէնտա.	101	»	25 »
5% ներքին փոխառութեան . . .	97	»	75 »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100	»	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ			
4½% Վկայակ. գիւղ. հող. բանկի	100	»	—
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օրլիգացիաները.	100	»	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	»	50
Օդէսայի — —	100	»	25 »
Թիֆլիսի — —	97	»	25 »
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6%	101	»	50
— — — 5% . .	99½	»	— »
— — Բուխարայիսի 6% . .	101	»	50
— — — 5% . .	99	»	50

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԹԻՖԼԻՍ. Տիկին Աննա Մէլիք-Յակոբեան (Բաֆֆի)։ Ձեր պատասխանը, մեր աշխատակից Հ. Առաքելեանի յօդուածի դէմ, չի ապագրվի, միայն այն պատճառով, որ զուտ գործ էք ածում այնպիսի խօսքեր, որ չեն սազում նախ՝ մի տիկնոջ, որ պէտք է աւելի քաղաքավարի լինի, քան «ազեղ սեռը», և երկրորդ՝ անպատշաճ են հայոց գրականութեան, որը մինչև սիրում էր հանդուցեալ Բաֆֆին, որին դուք փորձում էք ձեր պաշտպանութեան տակ առնել։ Այդպէս, օրինակ, դուք գործ էք ածում. «անազնուութիւն, խարդախ միջոցներ, կեղծումներ, անձնական շահեր, կրքերի ազդեցութեան տակ, քմահաճութեամբ խեղաթիւրած, չար նպատակով, անարգ, զզուելի» և այլ այդպիսի խօսքեր, որոնք մի գրական կրիտիկայի հետ որ և է կապ չունեն։

Եւ որովհետև զուտ պայման էք դնում, որ ձեր պատասխանը «անփոփոխ կերպով» տպվի, իսկ մենք այդպիսի դարձուածներ թոյլ չենք տալ տպագրել՝ բնականաբար ձեր պատասխանը, համաձայն նոյն իսկ ձեր պայմանի, տպագրվել չէ կարող։

Այդ մի կողմից. իսկ միւս կողմից, յարգելի տիկին, նախ քան հայոց գրականութիւնը և այդ գրականութեան հսկաներից մէկին՝ Բաֆֆիին, ձեր պաշտպանութեան տակ առնելը՝ բարեհաճեցէք իմանալ, որ հայերին չեն գրում՝ ազնվութիւն, թեթևսօրիկ, ընչայել, փաղաքել, հակառակորդ...

ՐՕՍՏՕՎ (Դօնի վրա)։ Լրագրական գործակալութիւն։ Համաձայն ձեր խնդիրքի, ուղարկվում է 3 օրինակ «Մշակ»։ Մինչև տարվայ վերջը երեք ամսվայ վճարը 9 ռուբլի է, ուրեմն, բացի ուղարկած 5 ռուբլին, էլի պէտք է բարեհաճէք ուղարկել 4 ռուբլի։

Բացի դրանից, յայտարարութեան համար, որ տպվում է «Մշակի» մէջ, պէտք է ուղարկէք 6 ռուբլի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄԱՆԳԼԻՍԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ կից ցանկանալով հիմնել ԳՐԱԴԱՐԱՆ, խոնարհաբար խնդրում եմ յարգելի Թարգմանիչներից, հեղինակներից և գրողներից՝ նուիրել իրանց գրուածներից մի-մի օրինակ“։ Հասցէն՝ Манглисъ, учителю Николаю Давтянъ. (№ 117) 1—6

ՀԱՐԿԱՒՈՐ է լաւ ձայնաւոր ՁԱՅՆԱԳՐԱԳԷՏ (առանց ընտանիքի) ՏԻՐԱՅՈՒ ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒ սուրբ Աստուածամօր եկեղեցու համար. տարեկան արդիւնք կը ստանայ 600 ռուբլի։ Այդ պաշտօնը ստանձնել ցանկացողը պէտք է լինի Գէորգեան ճեմարանի կամ Ներսիսեան դպրոցի սաներից։

Ցանկացողը կարող է դիմել հետևեալ հասցէով։ ЕКАТЕРИНОДАРЪ (Куб. об.) священнику Гарегину БАГДАСАРЬЯНЦУ.
(№ 116) 2—2

ՐԷԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ աւարտած մի անձն պատրաստում է միջնակարգ դպրոցների բոլոր դասարանների համար, առանց հին լեզուների։ Հասցէն՝ Միքայէլեան փողոց, տուն Արգուտինսկու։
(№ 116) 2—2

ԾԱԽՎՈՒՄ Է ԳԵՏԻՆ արքեպիսկոպոսական փողոցում, մաս-մաս, 200 սաժէն ամեն մի մասը, բաւական չափաւոր գնով։
Հարցնել Միքայէլեան փողոց, № 154։
(Ե. շ.) (№ 116) 2—3

Ստացված է Կ. Պոլսից և վաճառվում է
ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ
(Պատրիարք հայոց Կոստանդնուպոլսի)
ԻՍԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԶԱՆԱԶԱՆ ԴԻՐՔՈՎ
Գինը 40 կոպէկից մինչև 1 ր. 50 կոպէկ։
Դիմել՝ Тифлисъ. Михайловскій мостъ, магазинъ С. Матинянца և подъ гост. «Кавказъ» Табачный магазинъ Теръ-Осепянца. 3—3

ԱԶԴ

Մօտ մի ամիս է, որ անյայտացել է 14 տարեկան մի երեխայ, ԱՐՇԱԿ անունով, որն աշակերտ էր Մօլոկանովի փողոցում գտնվող կօշկակար Կարապետ Օհանեսովի մօտ։ Ծնողների խօսքով, երեխան յաճախ գանգատվում էր իր վարպետի կոպիտ վարմունքից։ Վերջին անգամ նրանից ծեծվելով՝ երեխան յայտնեց մօրը, որ ինքը այլ ևս չի գնայ բանելու. երբ մայրը պնդեց, որ նա չը թողնէ արհեստը, երեխան վճռողապէս հրաժարվեց գնալ գործի և այն օրից անյայտացաւ։ Երեխայի հայրը, Աստուր Աբրահամեանց, ծառայում է Դիդուբէ գտնվող մանրավաճառ Էյնաթեանցի մօտ։ Որ և է տեղեկութիւն ունեցողներին խնդրվում է յայտնել հօրը, այդ հասցէով։ (№ 113) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Ե. Ս. ՖՐԱՆՑԻՈՒՍ
տեղափոխվեց Վելիամինսկայա փողոցը տ. № 14. Քաղաքային Դումայի հանդէպ։
ԱԿԱՆՋԻ, ՔԹԻ և ԿՈԿՈՐԴԻ հիւանդութիւններ ունեցող հիւանդների ընդունելութիւնը տեղի է ունենում 5—7 ժամ երեկոյեան։
(№ 106) 10—20

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
տեղափոխվել է Գոլովինսկի պրոսպէկտ, № 28, տուն Ադամեանի։
Երեխաների, ներքին և կոկորդի հիւանդութիւններ. երեկոյեան 5—7 ժամը։
(№ 103) 10—10

ԴՕԿՏՕՐ ՎԱՀԷ ՄԻՆԱՍԵԱՆ
կը յայտնէ իրան դիմող հիւանդներին, թէ առաջիկայ սեպտեմբերից սկսեալ կը վերահաստատվի Վիեննա և իր հասցէն հետևեալն է.
Dr. WAHE MINASSIAN
Operator an der Klinik des Professor Chrobak. VIII. Schlösselgasse 10.
OESTERREICH WIEN

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՁՆԵՐԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մզի, խլի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՐՕՍՏՕՎԻ ՄԷՋ
բացվել է ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ և ԳՐԱՏՈՒՆ։ Ընդունվում են գրքեր, օրացոյցներ և պատկերներ՝ ծախելու համար։ Հասցէն՝ РОСТОВЪ (на Дону) ГАЗЕТНОЕ АГЕНТСТВО.
(№ 100) (չ.) 7—15

ԿՈՅՐԵՐԻ ԴՊՐՈՑ
(Նաբերեժնայա, տուն Մամիկոնեանի)
Ընդունում է պատուէրներ աշակերտների ձեռքով պատրաստած առարկաների համար.
1) ԳՈՐԳԵՐ ՄԱՀՈՒԻՒ ԿՏՈՐՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ 2 արշին լայն. 3 արշ. երկար. արժէ՝ 2 ռուբլի, 1 արշին լայն., 2 արշ. երկար. արժէ՝ 1 ռուբլի։
2) ԵՂԵԳԻՑ ՀԻՒՍԱԾ ՆՍՏԱՐԱՆՆԵՐ, աթոռները՝ 60 կոպ. դիվանները՝ համաձայնութեամբ։
3) ՁՈՒԱՆԻՑ ՀԻՒՍԱԾ ՏՕՊՐԱԿՆԵՐ 1 ր. 50 կոպէկից մինչև 2 ր. 50 կոպէկ.
(№ 117) 1—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՄԷՍԱԺԷՐԻ ՄԱՐԻՏԻՄ“—MESSAGERIES MARITIMES
Առաջիկայ շաբաթ, հոկտեմբերի 21-ին, մեկնելու է Բաթումից սոյն ընկերութեան „Tigre“ շոգենաւը դէպի Կ. Պոլիս, Մարսէյլ, Հավր և Լոնդոն։
Տոմսակներ՝ ուղղակի հաղորդակցութեան մինչև Պարիզ, կարելի է ստանալ Թիֆլիսում՝ պակասեցրած գներով։
Նոյնպէս արտասահման ապրանքներ փոխադրելու մասին հարկ եղած տեղեկութիւնների համար, դիմել սոյն ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Պուպպօ-ին, Դվորցովայա փողոց, քարվանսարայ նախկին Արծրունի № 127. 1—1

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ
ՏԷԼԷՖՕՆ № 288
Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, և բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2½-ը կէս օրից յետոյ։
Մուտքը Վէլիամինսկայա փողոցից, քաղաքային դումայի պօդէզդով։
(№ 90) (հ.) 9—20

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Սրանով պատիւ ունիմ յայտնելու Թիֆլիսի հայ հասարակութեան, որ ես յանձն եմ առնում տան փլատակների տակ մնացած և շինութիւններից վայր ընկնող թըշուառ զոհերի թաղման ծախսը, իւրաքանչիւրի համար 25 ռուբլի տալով քահանային, եթէ միայն քահանան կը ներկայացնէ ինձ Թիֆլիսի սրբազան առաջնորդի և կամ կոնսիստորիայի կողմից ժողովրդի ջաւորութեան վաւերագիրը։
(№ 112) 2—2 ԾՂԱԼՕԲ ԻՎԱՆԻՉ ՂՈՐՂԱՆԵԱՆ

Պատիւ ունեմ յայտնելու Կովկասի պ.պ. վաճառականներին, որ ես լինելով մշտապէս ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, յանձն եմ առնում և կատարում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, մանաւանդ կաշուեղէն ապրանքներ և նոյնպէս կարած ոտնամաններ առնել, քանի որ այդ գործի հետ ես լաւ ծանօթ եմ։
Իմ հասցէն՝ ВАРШАВА, Переѣздъ. домъ № 9, ТОВМАСЪ ЯРГУЛЯНЦЪ.
(Ե. շ.) (№ 116) 2—10

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Октября 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.